Հաստատում եմ՝
Գործնական Հոգեբանության և Սոցիոլոգիայի
«Ուրարտու» համալսարանի
ռեկտոր՝ Ս. Սեդրակյան
« 2020թ. (գիտխորհրդի արձ.№ 15) »

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. Համալսարանում սամանել դասախոսական անձնակազմի հետևյալ տարակարգերը՝ պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս և ասիստենտ:

2. պրոֆեսորադասախոսական կազմի մեկ /լրիվ/ դրույքի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության ծավալներն՝ ըստ տարակարգերի

ՊԱՇՏՈՆ	**Ուսումնական բեռնվածության ծավալ**
Պրոֆեսոր	750-800
Դոցենտ	820-850
Ավագ դասախոս	880-920
Դասախոս	900-990
Ասիստենտ	1000-1100

3. Ամբիոնի վարիչի ծանրաբեռնվածությունը սահմանել մեկ հաստիք:

4. Որպես կանոն, դասախոսին տրվում է մեկ հաստիք, սակայն ելնելով ամբիոնի ժամաքանակից դասախոսը համատեղության կարգով կարող է զբաղեցնել ևս մինչև 0.25 հաստիք (կամ մինչև 1080 ժամ):

5. Ամբիոններում, ըստ անհրաժեշտության, ժամավճարային ֆոնդը սահմանել ընդհանուր ժամաքանակի մինչև 3% -ը:

6. Դասախոսությունները վարել հոսքերով, մեկ հոսքի մեջ ընդգրկելով մինչև 30 ուսանող: Առարկայական ծրագրերի համապատասխանության դեպքում, հոսքի մեջ թույլատրել ընդգրկել տարբեր մասնագիտությունների ուսանողների:

7. Գործնական (սեմինար) պարապմունքները կազմակերպել ակադեմիական խմբերով՝ բոլոր մասնագիտությունների համար, խմբում ուսանողների թվաքանակը սահմանելով 30:

8. Դասախոսության, գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքները կազմակերպել զույգ ժամերով, յուրաքանչյուր ակադեմիական ժամի տևողությունը սահմանելով 35 րոպե:

9. Խորհրդատվությանը տրվող ժամաքանակը որոշվում է առաջադրանք տալու ժամանակ (թեմայի հրամանագրումից առաջ), բակալավրի ավարտական աշխատանքը ղեկավարող և խորհրդատվությունը իրականացնող ամբիոնների վարիչների համաձայնությամբ՝ ելնելով մասնագիտության առանձնահատկություններից և թեմայի բնույթից:

10. Ուսումնական հաստիքի հետ միաժամանակ թույլատրել կատարելու ժամավճարային աշխատանք հետևյալ ժամաքանակներով՝ չգերազանցելով 1080 ժամը

1,0 հաստիք զբաղեցնողներին՝ մինչև 240 ժամ,

0,75 հաստիք զբաղեցնողներին՝ մինչև 300 ժամ,

0,5 հաստիք զբաղեցնողներին՝ մինչև 330 ժամ,

այլ կազմակերպություններից կամ բուհերից հրավիրվածներին՝ մինչև 360 ժամ:

1. **ՊԴ տարեկան ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմեր սահմանել.**

Ուսումնական աշխատանքի տեսակ	Ժամաքանակի նորմեր	այլ
Լսարանային		
Դասախոսություն	1 ակադեմիական ժամ մեկ հոսքի համար՝ մինչև 30 ուսանող	
Լաբարատոր աշխատանք	1 ակադեմիական ժամ մեկ խմբի համար՝ մինչև 20 ուսանող	
Գործնական աշխատանք	1 ակադեմիական ժամ մեկ խմբի համար՝ մինչև 20 ուսանող	
Գործնական աշխատանք /լեզուներ, համակարգչային հմտություն դասընթացներից/	1 ակադեմիական ժամ մեկ խմբի համար՝ մինչև 15 ուսանող	
Ընթացիկ ստուգում և ամփոփում	0.3 ժամ մեկ ուսանողի համար, քննությանը՝ 1 ժամ	
Արտալսարանային ժամ		
Ռեֆերատներ, նախագծային ինքնուրույն	0.3 ժամ մեկ ուսանողի 1 աշխատանքի համար	Հանձնարարվող աշխատանքի

աշխատանքների ստուգում		քանակը սահմանվում է առարկայական ծրագրով
Մասնակցություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքներին	Նախագահին՝ 1 ժամ, հանձնաժողովի անդամներին, քննող դասախոսներին և քարտուղարին՝ 0.5-ական ժամ:	ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների թիվը չի գերազանցում 6-ը
Բակալավրի ավարտական աշխատանքի գրախոսություն	5 ժամ՝ 1 ավարտական աշխատանքի համար	Ընդհանուր թիվը չի գերազանցում 8-ը
Բակալավրի ավարտական աշխատանքի ղեկավարմանը	20 ժամ՝ 1 ուսանողի 1 աշխատանքի համար	Ընդհանուր թիվը չի գերազանցում 8-ը
Բակալավրի կուրսային աշխատանքի ղեկավարում	2 ժամ՝ 1 ավարտական աշխատանքի համար	Ընդհանուր թիվը չի գերազանցում 10-ը
Բակալավրի կուրսային աշխատանքի գրախոսություն	10 ժամ՝ 1 ավարտական աշխատանքի համար	Ընդհանուր թիվը չի գերազանցում 10-ը
Մագիստրատուրայի ընդունելության քննությունների համար	0.5 ժամ՝ 1 դիմորդի համար	
Ասպիրանտուրայի ընդունելության քննությունների համար	0.5 ժամ՝ 1 ասպիրանտի կամ հայցորդի համար	
Մագիստրատոսական թեզի ղեկավարում	30 ժամ՝ 1 թեզի համար	Ընդհանուր թիվը չի գերազանցում 7-ը
Մագիստրատոսական թեզի գրախոսություն	10 ժամ՝ 1 թեզի համար	Ընդհանուր թիվը չի գերազանցում 7-ը
Ուսանողական գիտական ընկերության համակարգում	20 ժամ	

Ուսումնական պրակտիկայի ղեկավարման	յուրաքանչյուր ակադեմիական խմբին հատկացնել 4 ժամ	
Արտադրական պրակտիկայի ղեկավարման, հաշվետվության ընդունման և պաշտպանության կազմակերպման համար,	յուրաքանչյուր ակադեմիական խմբին հատկացնել 6 ժամ	
Մանկավարժական պրակտիկա	0.5 ժամ՝ 1 ուսանողի համար	
Դասախոսի մասնակցություն ամբիոնի, ռեկտորատի և գիտական խորհուրդի աշխատանքների	10 ժամ	1 դասախոսի համար սահմանվում է ոչ ավելին քան 30 ժամ